Շուշին ծնունդ է առել վաղ միջնադարում՝ կրեյով Շիկաքար, Քարէշ գլուխ, Շուշուէր Դաւա եւ այլ անուններ: Շուշիի տեղում 1719-1724 թուականներին հայ հարիւրապետ Աւաւնը կառուցեց Արցախի պատմական սղնախնեբրից մէկը: Մովսի մակերեւոյթից 1000 մեթր բարձրութեան վրայ, աւելի քան 350 հեթթար տարածքի վրայ բերդ կառուցող հայերը շատ լաւ գիտէին, թէ ռազմավարական եւ տնտեսական ինչնչանակութիւն կ'ունենայ այն Արցախ աշխարհի համար: Շուշի բերդաքաղաքը բազմիցս դարձել է արցախահայրենիքի պաշտպանութեան կենտրոն: Սակայն 18րդ դարի կէսերին նաեւ հայի անխոհեմութեան հետեւանքով այդ հիւնաւորց բերդ-ամրոցը գաւթեց ձեւանշիր ինքնակոչ Փանահ խանը եւ սկսեց շրջակայքը բնակեցնել քոչուոր մահմետականներով:

1805ին ռուսական բանակը գրաւեց Շուշին, որ դարձաւ ռուսական զորքերի կենտրոնական ամրոցը, եւ նախկին աւերակների վրայ կառուցուեց նոր բերդ: 1830ին Գանձակից Շուշի փոխադրուեց Ղարաբաղի հայկական թեմի կենտրոնը: 1847ին Շուշին ստանում է նահանգալիս քաղաքի կարգավիճակ: 1855ին քաղաքի բնակչութիւնը կազմում էր 15194 մարդ: Իսկ դարավերջին քաղաքն ունէր 34 հազար բնակիչ, վեց եկեղեցի, երկու մզկիթ, 10 ռուսումնական հաստիքներ, 5 տպարան, 350 տեղանոց թատրոն, հիւանդանոց, երկու գրադարան եւ մշակոյթի այլ օճախներ: Մինչեւ 1920 թուականին Շուշիում տպագրուել է 22 անուն թերթ, որից քսանը հայերէն, երկուսը ռուսերէն: Շուշիում հրատարակուել է 150 գիրք: Առաջին աշխարհամարտի նախօրեակին Շուշին, չնայած՝ 1905-1908 թուականներու ազգամիջեան ընդհարումների հետեւանքով բաւանդակներ արեւելել էր, թիֆլիսից եւ Պաքուից յետոյ Անդրկովկասում կարեւոր դեր ունէր, հայ ժողովրդի տնտեսական եւ մշակութային խոշոր կենտրոններից էր: 1916ին Շուշիի բնակչութեան թիւը հասնում էր 43864ի: Մեծամասնութիւնը հայեր էին: 1917ի Փետրուարեան լեղափոխութիւնից յետոյ մուսաւթական դահիճները բազմիցս փորձել են տիրանալ Շուշիին եւ դուրս մղել արցախահայրենիքը: Պաքուից համապատասխան ցուցում ստանալով՝ Ղարաբաղի ժամանակաւոր նահանգապետ, ազգութեամբ քիւրտ խոսրովրէկ Սուլթանովի հրոսակները 1920 թուականի գարնան սկզբից տեղագրին ամրապնդում են ռազմական կէտերը եւ նոր Գնդատներ կազմակերպում: Նոյն թուականի Մարտի սկզբներին մուսաւթական զորամասերը գրաւում են Ասկերանի անցուղին եւ ապահովում կապը Շուշիի հետ: Սուլթանովի պահանջով աւերակներով հարուստ տեղակայուած մուսաւթական զորամասերի թիւը, եւ ձեռքարկում են մի քանի հայ մտաւորականներ: Քաղաքում կանգ էր առել հասարակական կենտր. վաղուց դադարել էին թերթերի տպագրութիւնը, դպրոցական պարապմունքները, մեծ թիւով հայեր քաղաքից տեղափոխուել էին գաւառ եւ անցել Ղարաբաղի ինքնապաշտպանութեան մարմնի (ՂԻՄ) կարգադրուեցան տակ:

Ինքնապաշտպանութեան մարմինը ղեկա-

24 Մարտին Հայաստանի Ազգային ժողովի ուժանիւթի ժամանակաւոր յանձնաժողովը հրապարակեց հաշուետուութիւն մը, որ լայն արձագանգ գտաւ հասարակութեան մէջ: Տեղի ունեցած թալանահր տարողութիւնը, ներկայացուած թիւերն ու փաստերը ցցած են մանաւանդ Հայաստանի մեր հայրենակիցները, որոնք իրենց մորթին վրայ գրացած են այդ կողողպուտին եւ չարաշահումներու հետեւանքը:

ՉԱՐՈՒՆԻ ՄՈՐՈՒՆԵՆ
Տանտիկին
- Ցաւուն եմ, որ այսքան ուշ սկսեցին այդ ամենը բացայայտել, քանի տարի է անցել: Անկեղծ ասած, չեմ հաւատում, որ հիմա էլ մինչեւ վերջ կը գնան, բայց շատ կը ցանկանայի այն տարիներին մեր ապրածի համար գո՞՞ծ մի քանիսը պատասխան տան: Նման դաժմ, իրօք, անմարդկային պայմանների կարող էր դիմանալ միայն մեր այս խեղճ ու կրակ ժողովուրդը: Բանը մարդ ցրտից մեռաւ, քանիսը իրանդուրթիւններ ստացան, բա՛՛ այս ամենը պէտք է ոնց այնպէս մարսեն:

Թող յանձնաժողովը աշխատի. տեսնենք ինչ կը լինի, բայց եթէ ճրայն օրէնքով է չպատժուել, Աստուած է պատժելու:

ԿԱՄՈՒՆ ՎՄՈՒՆԵՆ
Օտարալոգ
- Յանձնաժողովի աշխատանքը դեռ չի աւարտուել, եթէ կարողանան թալանը մինչեւ վերջ բացայայտել եւ պատժել, անշուշտ, լաւ կը լինի: Այն, ինչ ասուեց, կարծում եմ, իրականութեան կ'են: Այն անուցները, որ տրուեցին,

վարում էր Հայաստանի կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչ Արսէն Միքայէլեանը (Տէր Յովհաննիսեան): Նա յուր ստացաւ, որ մուսաւթական Ազգայնական ուժերը պատրաստուում են մուսուլմանական ամառնորի (նովոուզի) գիշերը (Մարտի 23ին) ընդհանուր յարձակում սկսել արցախահայրենիքում: Սուլթանովի կարգադրութեան ղեկուց Մարտի 12ին քաղաք էր մտել 150 հոգուց բաղկացած քրտական մի հրոսախումբը եւ ահ ու սարսափ էր տարածում հայրենիքի շրջանում: Սուլթանովը տեղեակ լինելով Արցախի գաւառներ իրադարձութիւններին, հրամայում է մարտական վիճակում պահել բոլոր զօրամասերը: Նա քաղաքի մուսուլման բնակչութեանը պատուիրում է պատրաստ լինել եւ սպասել իր ազգանշանին՝ քաղաքի հայկական մասը հրդեհելու, թալանելու եւ հայրենակնութեանը բնաջնջելու համար: Այդ նպատակով քաղաքի մուսուլմաններին նախօրք բաժանում են քարիւղ, լուցիկ, գէշի տարրեր տեսակներ: Իրբեմանները շքերթի մասնակցները համար Աղտամից եւ Խանքեղիից է, ինչպէս եւ այլ վայրերից բաւակալին զօրամասեր են տեղափոխուում Շուշի, հրաւիրուում են հարեան մուսուլմանական բնակավայրերի եւ շրջանների խան-րէկերը, թուրք սպաները:

Ժամանակակիցները Արարած Կիսրէկեանը խոստովանեց, որ Արսէն Միքայէլեանին, որ չի կարողացել ապահովել քաղաքի հայրենիքի անվտանգութիւնը ու պաշտպանութիւնը, երբ որ ձեռքի տակ ունէր Դայի Ղազար (Միքայէլ Բաղաթիոսեան), Առաքել Դայի (Ալեքսան Բալայեան), Կու (գնդապետ Մարտիրոսեան), ռուս խոսր Մարտիրոսեան, գնդապետ Մեսեան, Մացակ Յովհաննիսեան, Հովակ Ստեփանեան, ռուսական բանակի նախկին քաղաքի գնդապետ Եգոր Տէր Աւետիսեան եւ ուրիշներ, որոնք կուտի մեծ փորձ ունէին: Այդ նոյն հեղինակը, ինչպէս եւ ուրիշներ, նշում են, որ քաղաքի հայ բնակչութիւնը անտեղեակ էր, նրանց չէին նախապատրաստել ինքնապաշտպանութեան: Սուլթանովը լուր ստանալով, որ քաղաք է թափանցել հայկական մի Գնդատ եւ փորձել անկարգութիւնը գէշ խելի, հրամայում է «սրի ու հրի մատնել հայկական քաղաքամասը» եւ «քաղաքում ոչ մի հայ չթողնել»: Կոտորուած սկսում է Մարտի 23ի գիշերը: Մահմետական մոյեռանոց խուժանը անկարգների եւ թուրք սպաների գլխաւորութեամբ ներս է խուժում քաղաքի հայկական թաղամասը, հրդեհում, կողոպտում տները, հասարակական շէնքերը, խառնութեանը, անխնայ կոտորում անպաշտպան բնակչութեանը: 1920ի Մարտի 23ին սպանուում են հազարաւոր հայեր, փրկուածները Քարիտաւրի գիւղատանից արքահետոյ ցած են իջնում մառախուղի միջով եւ անցնում վարանդա ու Դիզակ, մտնել Ն հազար մարդ: Քաղաքում մնացին մտտ 5 հազար հոգի, որոնցից գերեւեցին 2200 հոգի, իսկ մնացած՝ 3000 հոգին փողոցներում մորթուում են:

Թիֆլիսում տպագրուող «Սլավո» թերթը այդ օրերին գրել է. «Քաղաքի հայկական մասում չի մնացել քար քարի վրայ: Մուսուլմանական խուժանը Մարտի 23ին ներս է խուժել այդ մասը եւ սկսել սպանել հայ բնակիչներին: Մտնում էին տները, սպանում տան տէրերին, յափշտակում բոլոր արժէքաւոր իրերը եւ տոււււր հրդեհում: Քաղաքի հայկական մասը Մարտի 24ի երեկուտեան իրենից ներկայացնում էր կրակի մի ծով: Ամէնուրեք յուժում էին ճիշեր, հառաչանքներ եւ լաց: Մարդկային գոհերը շատ են: Զանապարհին փուռեւ են սպանուածները իր կակներ: Ետո դիակներ կան տների աւերակներում: Երբ խուժանի յանցաւոր կրքերը մեղմացան, նա սկսեց կողոպտել տների տանիքները, պատուհանների շրջանակները, դռները եւ կրակից գրեծ մնացած այլ մասեր»:

Այդ բարբարոսութեան մասին մուսուլմանական ասկերա Շուշիից իր մօրը գրում է՝ «Շուշի Ղալայում ինչքան հայեր կային կոտորեցին, կանանք բանտարկեցին, որոնց շատ են զոհուածները եւս տալիս»: Մէկ ուրիշ ասկերա Պաքուում գտնուող եղբորը գրում է՝ «Տե-

սածոյ հրմանիստանը (խօսքը վերաբերում է Շուշիի հայկական թաղամասին - Հ. Ա.) այրուում է, 5 կամ 10 տուն պահեցին»:

1920 թուականի Մայիսին Շուշի եկած Օրդոնիկիձէն կը պատմի. «Մենք վկայ եղանք սարսափելի տեսարանի. այդ քաղաքի աւերակների ու ջրհորների մէջ տարուեցրուող կանանց ու երեխաների դիակներ: Հայկական Շուշի քաղաքի խախտուած ոչնչացում, բրուսարաւութիւն, կոտորած, կանանց ու երեխաների ջրհորները ու անդունդները նետում»:

Այդ օրերին Շուշիում պագանարար սպանութեանը Ղարաբաղի բուշակների ղեկավար Ալեքսանտր Մատուրեանը, Արցախի թեմի առաջնորդ եպիսկոպոս Վահան Տէր Գրիգորեանը, քաղաքում յատուկ թիշկ Եարամիւեանը, բանաստեղծ Մ. Ջատուեանը, յայտնի բեմական վարորդներ թաւրիգեանը, Գարրիկը, մտաւորականութեան եւ մշակոյթի շատ ներկայացուցիչներ: Ազգայնական բանակի գլխաւոր սպայակոյտի պետ, գնդապետ Վեթիովը հպարտանում էր, թէ Մարտի 23ին Շուշիում գլխատուել է 8 հազար մարդ:

Յետոյ հաստատուեցին խորհրդային կարգերը: Շուշիի գեհնից փրկուածները դիմեցին մարգային եւ հանրագետական իշխանութիւններին՝ հնարաւորութիւն տալ վերադառնալ եւ բնակուել հայրենի քաղաքում: Սակայն նրանց խնդրանքը մերժուեց:

1945ի Հայկոմկուտուի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Յարութիւնեանը Ստալինին գրած նամակում հաւատարացնում է, որ Լեւնալին Ղարաբաղը Հայաստանին միաւորելու դէպքում հայ ժողովուրդը լիովին կը վերականգնի Շուշի քաղաքը: Սակայն այս անգամ եւս մերժուեց: Ազգայնական բարարուսները ամէն կերպ ձգտել են Շուշիում հողի երեսից սրբել այն ամբը, ինչ հայկական է, ինչ արարուել է հայի ձեռքով: Մինչեւ ութսունական թուականներին վերջը ջարդել են թաղեւտ թաւախներին (այդ նա է իր միջոցներով 1896ին 18 քմ. հետաւորութիւնից ջուր անցկացրել Շուշի եւ առաջին ծորակները տեղադրել մուսուլմանական թաղամասում), Խորհրդային Միութեան կրկնակի հետոս Եւստու Ստեփանեանի, քաղաքական գործիչ Իւան Թեւոսեանի, ազատագրական պայքարի գիւնուորներ Բազում Աւագեանի եւ Արամ Կոստանեանի յուշարձանները, քաղաքի հայկական վեց գերեզմաններից երեքը լրիւ մաքրել հողի երեսից:

Ղարաբաղեան չարժման հէնց սկզբից Ազգրպէյնանի իշխանութիւնները մեծ յոյսեր էին կապում Շուշիի հետ: Արցախահայրենիքներ իր բնորոշից դուրս մղելու եւ նրանց ոչնչացնելու գործում Շուշին պէտք է հանդիսանար խոշոր ռազմավարական յենակէտ: Սկսած 1991 թուականի Նոյեմբերից նախ՝ «Ալագաններով», ապա՝ «Կրտսերներով» Շուշիից օր ու գիշեր ռմբակոծում էին Ստեփանակերտը, Քարախուրը, Եոչը, Քարաշէնը եւ այլ բնակավայրեր: Միայն Ստեփանակերտի վրայ նետուել է 15 հազար արկ, որից 13 հազարը՝ «Կրտսերներով», Ստեփանակերտում լրիւ ոչնչացուել է՝ 400 տուն, գրեթէ բոլոր արդիւնաբերական ձեռնարկութիւնները՝ Երիտանցաց հանրապետութեան մայրաքաղաքի բնակչութեան 27 տոկոսը (10 հազար մարդ) մնացել էին առանց օթեւանի:

Շուշիի կրակակէտերի լուցումը դարձել էր ամենահայտնագ պնդիրը: 1992 թուականի Մայիսի

ՄՈՒՀԱՄՍԷՏ ՄՈՒՍԹԱՅԱ ՄԻՐՈՅԻ ՄՈՒՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՈՒԵԼԷՆԵՏԻ

ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՅԵՐՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒՄ

Սուրիոյ նախագահ Հաֆիզ Ասատ Հալիպինա-հանգապետ Մուհամմէտ Մուսթաֆա Միրոյին յանձնարարեց Սուրիոյ նոր կառավարութեան կազմութիւնը՝ Մահմուտ Ջողպիի կառավարութեան հրահրումով Ետք: Վերջինիս հրահրումը տարտարիէ ի վեր երկրի ամէնէն մեծ կառավարական փոփոխութեան ճամբան հարթեց:

Այս առնչութեամբ Սուրիոյ նախագահի բան-բեր ժողովրդին հետ, որ նախագահ Ասատ Ջողպիին Մահմուտ Ջողպիի կառավարութեան հրահրումը եւ յանձնարարեց Մուհամմէտ Մուսթաֆա Միրոյին՝ կազմել նոր դաշինքը:

Քուրիէի աւելցուց, որ նախագահ Ասատ «ներկայ կառավարութեան պահանջեց շարունակել իր ընթացիկ աշխատանքները, մինչեւ նոր կառավարութեան կազմաւորումը»:

Ջողպի իր կառավարութիւնը կազմած էր 1987ին, իսկ 1992ին փոփոխութիւններ մտցուցած էր անոր մէջ:

Քաղաքական մեկնարաններ նկատել տուին, թէ նոր կառավարութեան կազմաւորումը Խարաթ-Սուրիա բանակցութիւններու վերսկսման ցուցանիշներէն մէկն է: Կարգ մը մեկնարաններ ըսին, թէ կառավարական փոփոխութիւնը ցոյց կու տայ երկրի ներքին հարցերու կարգաւորումը եւ ճանաչական է, որ փոփոխութեան յաջորդէ իշխող Պաաս կուսակցութեան ղեկավարութեան համադրումը: Ցայտնենք, որ կուսակցութիւնը 1985էն ի վեր չէր ունեցած իր համադրումը:

Նոր վարչապետը (55 տարեկան) Սուրիոյ նահանգապետներուն նախագահն է: Ան վարած է Տարաքի, Հասաքի եւ Հալիպի նահանգապետ-

ութիւնները: Ան ծնած է Սուրիոյ գիւղական շրջաններէն մէկուն՝ Թելլի մէջ, 1941ին: 1970-ականներու սկիզբը եղած է Սուրիոյ ուսուցիչներու սենտրոնի նախագահ, իսկ նոյն տասնամեակի աւարտին անդամ դարձած է արար ուսուցիչներու միութեան գործադիր գրասենեակին, Գահրիէի մէջ:

Մուհամմէտ Մուսթաֆա Միրո արարական գրականութեան եւ ընկերային գիտութիւններու դոկտորային վկայական ունի Երեսնի Պետական համալսարանէն: 1980ին կ'անդամակցի իշխող Պաաս կուսակցութեան. այժմ անդամ է կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէին:

Հալիպի նահանգապետութեան մէջ իր աշխատանքներն ընթացքին ան վարկ չհասցաւ: Դամասկոս բնակող ղրկանագէտ մը, երբ իր նշանակման լուրը ստացաւ, յատկացուց, թէ Միրո, իբրեւ Հալիպի նահանգապետ, թղթածրարները եւ հարցերը քննեց իրենց ամբողջութեան մէջ եւ նոյնիսկ չվարանցեալ ծառայել վիճակով այցելութիւններ կատարելու, որպէսզի ստուգէ իր վարչութեան կատարած աշխատանքները:

Դիւանագէտը աւելցուց, որ նոր վարչապետը խիստ մարդ է եւ պիտի գլխունայ բարեկարգումները յաջողութեամբ կատարել:

Իր կարգին, նախագահ Հաֆիզ Ասատի կենսագիր Փաթրիք Սիլ աւելցուց, թէ նոր նշանակած վարչապետը «կենտրոնական մարդ մըն է» եւ երկրի «լաւագոյն նահանգապետներէն մէկն է»:

Սիլ ըսաւ, թէ Միրոյի նշանակումը թիմաշինի ներարկում մըն է եւ նախատեսեց որ նոր կառավարութիւնը բարեփոխումներ կատարէ

մանաւանդ տնտեսութեան արդիականացման եւ փոստաւարութեան դէմ պայքարի բնագաւառներուն մէջ:

Փաթրիք Սիլ շարունակեց անդրադառնալ նոր վարչապետի նշանակումի հարցին եւ նկատեց, որ «այս փոփոխութիւնը մեծ ազդեցութիւն պիտի չունենայ իսրայէլիական գործընթացին վրայ, որովհետեւ Սուրիոյ կեցուածքը յստակ է այս առնչութեամբ»:

Փաթրիք Սիլ նախատեսեց, որ Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհ պիտի շարունակէ իր ձեռքները մէջ պահել Իսրայէլի հետ բանակցութիւններուն թղթածրարը:

Այստեղ նշեց սակայն, որ Թուրքիոյ սահմանին վրայ գտնուող Հասաքի եւ Հալիպի նահանգապետ եղած շրջանին Միրո պահեց լաւ եւ շարունակական կապեր այս երկու շրջաններուն սահմանակից թրքական նահանգներու իր պաշտօնակիցներուն հետ, հակառակ անոր որ երբեմն երկու երկրներու յարաբերութիւնները տագնապ կ'արարէին:



Սուրիոյ նոր նշանակուած վարչապետ Մուհամմէտ Միրո

պիտի բաղկանայ երիտասարդներէ ինչպէս նաեւ՝ փորձառութիւն ունեցող քաղաքական գործիչներէ:

Ան աւելցուց, որ որեւէ առեւտրային ներկայիս իր երկիրը փոփոխութեան կարիք ունի: Քաղաքական աղբիւրներ հաստատեցին, որ նոր կառավարութիւնը հիմնականօրէն պիտի կեդրոնանայ տնտեսական բարեկարգումի վրայ: Ջողպիի կառավարութիւնը ձախողած էր այս աշխատանքները:

Նոյն աղբիւրները յիշեցին, որ Ջողպիի կառավարութիւնը չյաջողեցաւ իրագործել նախագահ Հաֆիզ Ասատի տեսակէտները:

Միւս կողմէ, գործարարներ կը պահանջեն բարեփոխութեան ենթակալել այն օրէնքեր, որ կ'արգիլէ օտար զբոսայգիներու գործածութիւնը եւ խիստ պատիժներ կը սահմանէ օրինախախտներուն: Անոնք կը պահանջեն նաեւ դրամատնային համակարգի բարեկարգումը եւ բաժնետոմսերու շուկայի մը կառուցումը:

«Նահար»

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԷՅՐՈՒԹ. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏԼԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՐԵՔ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ստորեւ տրուած յօդուածը համադրութիւն մըն է Էլիքանանեան «Տիար» թերթի 28 Մարտի թիւին մէջ լոյս տեսած Ասատ Պշարայի եւ Իպթիսամ Շոտի յօդուածներէ:

Ընտրական դաշինքները սկսան յստականալ Պէյրութի մէջ: Մայրաքաղաքի երեք ընտրական շրջաններուն մէջ գոյութիւն ունին հաւասարակշռութիւններ, որոնք յստակօրէն կ'արտացոլան:

Եւ եթէ ընտրապայքարը տեղի պիտի ունենայ փոքր ընտրական ցանկերու մակարդակով, ապա կարեւորագոյն հարցը այն է, որ թեկնածուները որակաւոր ըլլան: Երեք ընտրական շրջաններուն մէջ այլ անկախ կազմակերպութեան կան եւ, որովհետեւ ընտրապայքարի իրադիւնտիրայի տեսիլու կարելիութիւնը շատ սահմանափակ է՝ այն աստիճան, որ մայրաքաղաքի իւրաքանչիւր բեւեռ (ղեկավար), սկսաւ լրջօրէն մտածել իր դաշնակիցներուն մասին:

Եթէ Պէյրութի մէջ յայտնի էր այն իրողութիւնը, որ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրի երեք ընտրական շրջաններուն համար պիտի կազմէ երեք ընտրական ցանկեր, ապա նայաւածները կ'ուզուէին ուրիշ ընտրանքներու: Նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրի պարտաւորուած է մղել այնպիսի ընտրապայքար մը, որուն արդիւնքներուն եւ ընթացքին վրայ նախօրոք հակակշիռ չունի:

Պէյրութի ընտրապայքարը ոչ միայն պայքար մըն է քուէ հաւաքելու եւ այլազան ձեւի մոնիթորինգներու հրահրելու, այլեւ՝ անկախ կեդրոնականներու հրահրելու մըն է, որ չի կրնար շրջանցել երկրի ընդհանուր քաղաքական հաւասարակշռութիւնը:

Ընտրական դաշինքները սկսան երեւիլ Պէյրութի մէջ: Այսպէս մայրաքաղաքի երրորդ ընտրական շրջանին մէջ վարչապետ Հըսի ցուցակը կը թուի, թէ ամբողջացած է: Այս ընտրա-

կան շրջանին մէջ կը սպասուի բուն յայքար. վարչապետ Հըսի ցուցակը կազմուած է Ահմատ Պապարայէն (սիւնի) Մուհամմէտ Եուսէֆ Մալուէն (շիի), Իսամ Նասամէն (տիւր-գի): Իսկ հայ առաքելական եւ հայ կաթողիկէ թեկնածուներու ընտրութիւնը ձգուած է հայ համայնքի գործող ուժերուն:

Կը մնայ հարց տալ, թէ որո՞նք են տկարութեան եւ ուժի կէտերը Հարիրիի եւ Հըսի ընտրական ցանկերուն, Պէյրութի երրորդ ընտրական շրջանին մէջ:

Հարիրիի հակառակորդները գրաւ կը դնեն քուէ հաւաքելու իր անկարողութեան վրայ: Անոնք կը նկատեն, որ Հարիրի չի կրնար իր ժողովրդականութիւնը տարածել իր ցանկակիցներուն վրայ:

Պէյրութի ընտրապայքարին մանրամասնութիւններուն հետեւողները կը հաստատեն, որ յառաջիկայ ընտրապայքարին բարդութիւնները կը բազմաճանաչուին որքան կը մօտենան ընտրութիւնները: Այս հարցը բոլոր քաղաքական ուժերուն հետաքրքրութիւնը կը շարժէ: Ասոր համար այլ մեկնաբանները կը նկատեն, որ մայրաքաղաքի ընտրապայքարը դիւրին պիտի չըլլայ եւ այս իրողութիւնը կը ծանրանայ ընտրապայքարի ամբողջ գործընթացին վրայ:

Նաեւ ասոր համար է, որ վարչապետ Հըսի որեւէ նախընտրական կեցուածք չարտայայտեց ցարդ: Նոյնն է պարագան նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի կամ միւս թեկնածուներուն: Գործնական գետնի վրայ տակաւին ցանկերու կազմաւորումը կը հանգիստի հիմնական խոչընդոտներուն, բոլոր ընտրական շրջաններուն մէջ, սակայն ընտրական ցանկերուն ձեւը սկսաւ երեւան գալ:

Առաջին ընտրական շրջանին մէջ օրինակ, ուր Հարիրի կը մղէ իր ընտրական պայքարը, պայքարը տեղի կ'ունենայ երկու ցանկերու միջեւ: Մինչեւ օրս Հարիրի, որ կը գլխաւորէ

առաջին ցանկը, դիրքորոշումը կը կայանայ Ատնան Արաքիի հետ դաշնակցելուն մէջ, իսկ յայն - օրթոքոքաւ արտոնին համար անկատի պիտի ունենայ Աթէֆ Մաժալիին:


Երկրորդ ընտրական շրջանին մէջ, դաշինքները տակաւին չեն յայտնակցած: Այստեղ երեսփոխան Ռամմամ Սալամ կը ձգտուի, որ յարաբերութիւնները լաւ

ըլլան միւս շրջաններու թեկնածուներուն հետ. ան կը ձգտուի նաեւ մայրաքաղաքի իրականութեան կազմակերպական պատկերը արտացոլման:

Սալամի մօտիկ աղբիւրներ կը հաստատեն, թէ ան տակաւին որեւէ նախընտրական դաշինք չյայտարարեց, սակայն «Հըլպալա»-ի եւ «Ահիպա»-ի հետ համագործակցութիւնը վճռուած է:

Կ'ըսուի նաեւ, որ երեսփոխան Նաժահ Ուաքիմ ընտրութիւններուն պիտի մասնակցի այս ընտրական շրջանին:

Իսկ երրորդ ընտրական շրջանին մէջ տեղի ունենալիք ընտրապայքարը չի դադարի բարդ ըլլալէ, մանաւանդ որ այս ընտրական շրջանին զլիւստը թեկնածու վարչապետ Սիլիմ Նախաւարութեան թղթածրարներուն եւ ընդդիմու-



Առաջին Ընտրական Ծրջան	Երրորդ Ընտրական Ծրջան
Էյրեֆիէ Մագրաս Սայֆի	Այն Սրէյսէ Ռաս Պէյրութ Ջոքաք Պլաթ Մատուր Մարֆա Մինա Հըսն
Երկրորդ Ընտրական Ծրջան	
Մըսայթալ Պաշուրա Ռմէյլ	

թեան արշաւներուն ճնշումին ենթակայ է: Տակաւին չվճռուեցաւ նաեւ այս ընտրական շրջանէն առաջարուելիք երեք հայ թեկնածուներուն հարցը: Վերջինս ուղղակիօրէն կ'անցընէ հայկական կուսակցութեանց որոշման հետ: Երբ փակելով իրենց վերլուծումը Պէյրութի մէջ սպասուող ընտրապայքարին առնչութեամբ, վերոյիշեալ աղբիւրները կը նախատեսեն, որ յաջորդող քանի մը օրերուն, գլխաւոր թեկնածուներէն մէկը բացուած պիտի լայտարարէ երեսփոխանական ընտրապայքարը:

«ՏԻԱՐ»

ԼՕԻԻ ՅԻՄՆԱՄԵԱԿԸ ՀԱՆԳՐՈՒՄՆ ՄԸՆ Է ՄԵՐ ՈՒՍՏԸ ՆՈՐՈԳԵԼՈՒ

Շարունակութեան 4րդ էջէն

թուէն ուրիշ մարտիկ մը. - Ես ալ պատիկ եղած ատենս բաւական կերած եմ «պնակ կը կերակուր» մը: Դիմացն երկու մարտիկներ գիրար ցոյց տար լով. - Մենք ալ Շոթրայի «Կազդուրման կայանը» գացած ենք: Զենք գիտեր, ինչո՞ւ քար լողութիւն մը տիրեց սենեակին մէջ. չորս խաչուկներ արտասուալից անքերով իրարու կը նայէինք: Չէինք գիտեր, թէ ինչ պիտի տրայտախախտէ: Երբ յուզումի ալիքը քիչ մը մեղմացաւ, կրցանք ըսել. - Սիրելի ընկերներ, ազ-

գին ձեզի ըրածը, ոչինչ է, բաղդատած ձերնիս: Դուք ձեր անձը սահուան վտանգի տակ զննելով կուտեցաք, փորաւորուեցաք, արիւն քսեցիք: Զեզմէ ոմանք իրենց գարուն կեանքը կորսնցուցին, որպէսզի հայ ժողովուրդը Պուրծ Զամուտի մէջ հանգիստ եւ ապահով ապրի. դուք մեր ֆետայիներուն շարքին անցաք, ձեր զոհողութիւնները, ձեր անուանները, անձուրանալի պիտի մնան հայ ժողովուրդի սրտին մէջ: Խաչուկներու մեր բարոյական վարձատրութիւնը ստացած էինք... Տակաւին շատ յուշեր ունիք, այլ օրերէն, մեր գիտեալ

տողմէ, որոնք կը փաստեն մեր ժողովուրդին երախտագետ հոգին: Որքա՞ն մօտեցաք մեր համեստ ժողովուրդին, այնքա՞ն կը սիրէք զինք, կը մոռնաք հեղուր մի վազը ու կը կապուիք իրեն: Ինչ գանձեր կան թացուած մեր ժողովուրդին մէջ. պէտք է պեղել գիտնալ... Օրհնեալ ըլլալ յիշատակը այն բոլոր նուիրեալներուն, որոնք աշխատեցան մեր միութեան վերելքին համար, եւ որոնք առյալեւս բաժնուած են մեզմէ: Անկեղծ սիրով յորհուրդեմ, այն բոլոր ընկերուհիներուն, որոնք երկար,

երկար տարիներ անսակարկ նուիրումով ծառայած են մեր կազմակերպութեան: Աշխատած են լուռ: Տառապած են անձայն ու մաշած են հեւ ի հեւ աշխատանքով: Իրենց հոգեփունը այն է, որ մեր սիրելի Սիրիւնը, հակառակ իր յիսնամեայ տարիքին, տակաւին երիտասարդ է, ու առոյգ. Լիբանանի Սարիի մոր ընծիկներով հարուստ: Անցնելու ինքնազստահ ու հպարտ քայլերով կը յառաջանայ մեր հանրային կեանքի յայն պողոտայէն սփռելով իր բարիքները չորս դին: Յանուն մեր բոլոր խաչուկներուն, կ'ողբունք մեր հեղուրները իր հեղուրով ու բերքովը բնուարողութեան սիրելի Լիբանանեայ Օգնութեան հաշիւ, կ'մաղթեմք, որ ան իր երկրորդ յիսնամեակը չբոլորած

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԷՆ

HAMPIG SASSOUNIAN C - 88440

CSP - L.A.C. D -5- 232 44750

60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536

USA

«ԱՉԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒԹՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «ԱՉԴԱԿ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատուն՝ ծանուցումներու քաժամումը հասցնեն հրատարակման քուսակէն առնուած օր մը առաջ. ՄԱՆՉՊԵՆ ԵՐԵՎԱՆԻ ՎԱՍԿ

ՄԱՆՉՊԵՆԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:



Կնոջական


ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԸ

ԵՐԵՒԱՆԵՐԸ ԵՒ ՄԱՐԶԱՆՔԸ

Մ ա ս ն ա գ է տ մարզիկի մը կարծիքով, երեք տարեկանն են սկսեալ երեխաները պէտք է որ մարզանք մը կիրարկեն, քանի որ մարզանքը կ'օգնէ անոնց ֆիզիքական եւ մտային աճին եւ անհատականութեան կերտումին:



ՆՈՂԱԳԻՐ ԶԱԽԱՐՈՎ ՍՈՒՆԿ



Չորս անձի համար անհրաժեշտ են.-

- 250 կրամ խոշոր թարմ սուճկ
- 100 կրամ մանր ճերմակ ձաւար
- Ապուրի լեցուն դգալ մը մանրուած ազատքեղ
- Ապուրի 6 դգալ ձիթաիւղ
- Կէս կիտրոն
- Աղ, համեմ

Պատրաստութեան կերպը.-

Սուճկերը զգուշութեամբ լուալ, մաքրել եւ խոշոր շերտել: Կտրտուած սուճկը դնել ամանի մը մէջ եւ վրան կիտրոնի հիւթը թափել:

Չաւարը քիչ մը թրջել եւ բաց ամանի մը մէջ տարածել:

Ձիթաիւղը տաքցնել, սուճկի իւրաքանչիւր կտոր ձաւարին մէջ ճնշելով թաթխել եւ տապկել, ապա ծծուն թուղթի վրայ փոխադրել:

Տապկուած սուճկերը փոխադրել ցերկայանալի ամանի մը մէջ, աղել, համեմել եւ երեսը զարդարել մանրուած ազատքեղով:

Հրամցնել խմիչքներու կողքին:

Բարի՛ ախորժակ...

ԱՅՍ ՓՈՂԵՐԸ ՊԻՏԻ ԶՄԱՐՍՈՒՆ

Ծարունակուած 5րդ էջէն

ԵՆ, մենք էլ պէտք է կողքից հետեւենք ու լսենք նրանց զեկոյցները:

ՅԱՄԻԿ ՍԻՄՈՆԵՆ
Արտաշատի Բուրաստան գիւղից
- Է՛, տ ժողովուրդը մեզել է վրէժ լացող չկայ: Եսօրուան մեր խղճուկ վիճակը հո՛՛ մի օրում չեղաւ: Մէկը մագուրթ ծախեց, կերաւ, մէկը գործարանները: Գիւղացիների վիճակը յատկապէս շատ ծանր է, փորձեք իր շրջաններում մի հատ բնական տեսքով մարդ գտնել: Եթէ նրանք խիղճ ունենային, մարդկանց էս օրի չէին հասցնի: Լեւոնն էլ, Վանոն էլ, սաղն էլ գողացել են, ո՛վ չգիտի, ասա, դրանց պատժեն: Ազգային ժողովում պիտի մի օրէնք ընդունեն, որ ոչ թէ ինձի էլ ընկնեն դրանց դատ ու դատաստանի յետեւից, չէ՛, միանգամից կիւլլեն. պրծնեն ու սկըսեն իսկականից մտածել գիւղացու մասին:

ՏԻԳՐԱ ԹԵՒԵՆՈՒՆ
Գործազուրկ ծարտարապետ
- Ժողովրդի մտահուրթունքը փոքր-ինչ վերականգնելու նպատակով նրանք պէտք է գտնեն նա պատժեն թալանի բոլոր հեղինակներին: Զագարներ չէ, որ կերել են, միլիոնների ու միլիարդների մասին է խօսքը: Անկեղծ ասած, չեն պատկերացնում, թէ ինչ արժանի պատիժ պէտք է սահմանեն նրանց համար, բայց որ պէտք է խիստ պատժել անկախ դիրքից ու պաշտօնից, միանշանակ է: Մի սերունդ ունենք, որ այդ խաւարի ու ցրտի պատճառով անգրագետ մենծացաւ, դրա համար ո՛վ պէտք է պատասխան տայ: Սրա հետեւանքների մասին էլ դարձեալ մի տասը տարի յետոյ կը սկսեն խօսել:

Հաւատում են, որ այդ յանձնաժողովը կ'աշխատի ու բոլոր փաստերը կը պարզուեն, այլ հարց է, թէ դատախազութիւնն ինչպէս կը վարուի մեղաւորների հետ:

«ԱԶԳԱԿ»
ՇՆՈՒՑԱՑՆԻ ԹԻՒՆԵՐԸ
«ԱԶԳԱԿ» հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: - 258526, 260115 եւ 241274:

Երեխային տարիքին.-

- Երեք տարեկան երեխան կրնայ կշռութաւոր պարի (*սիթմիթ*) հետեւել եւ թեթեւ մարզանքներ կիրարկել:
- Հինգ տարեկան երեխան կրնայ լողի, թեքուանտոյի, ճիւտոյի, պալէի, միջի ֆուտբոլի եւ միջի պասքէթի հետեւել:
- Վեց տարեկան երեխան կրնայ թենիսի թեթեւ փորձեր ընել, քանի որ թենիսը կեդրոնացում է կ'օգնէ:
- Եօթ տարեկան երեխան կրնայ փիցկի - փոնկի եւ ճոկի կի հետեւել:
- Ութ տարեկան երեխան արդէն կրնայ վերը յիշուած մարզանքներէն երկուքը կատարել:

Միւս կողմէ, մասնագետ մարզիկը կը զգուշացնէ երեխաներուն համար վնասակար եւ վտանգաւոր հետեւեալ մարզանքներէն.

- Մանրաբարձութիւն
- Նշանառութիւն
- Ըմբշամարտ
- Զիւլարել (վեց տարեկանէն առաջ):

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹԵՐ

ՀԱՄԵՐԱՇԽ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Ընկերարաններու եւ հոգեբաններու կարծիքով, վէճեր եւ տագնապներ չունեցող ընտանիք գոյութիւն չունի:

Բացմաթիւ ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ այն ընտանիքները, որոնք յաջողած են համերաշխութիւն եւ ներդաշնակութիւն ստեղծել իրենց տուննէն ներս, ունին հասարակաց որոշ կէտեր:

Այսպէս, համախոհութիւն կը տիրէ այն տուններէն ներս, ուր ծնողները լաւատես են եւ պարզ կեցողութեամբ ունին երեւոյթներուն հանդէպ: Անոնք դժուարութիւններու եւ տագնապներու պարագային ունին այն համոզումը, թէ ճշտապէս լուծում մը կը կրնանք գտնել:

Նոյն ուսումնասիրութիւններուն համաձայն, համերաշխ ընտանիքներէն ներս գոյգերը կը փորձեն գիրարկել ու հասկնալ: Ի վերջոյ, երկխօսութիւնը հիմքն է համերաշխութեան:

ՄԻԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՏՐԵՆԸ
Ընկերարաններու կարծիքով, կարեւոր չէ, թէ ընտանիքի մը անդամները քանի՞ ժամ միասին կ'անցընեն. կարեւորը այն է, որ անոնք այդ ժամանակը ինչպէս կ'անցընեն:

Պէտք է ստեղծուի պահեր, ուր գործակցութիւն, երկխօսութիւն տիրէ, բայց միւս կողմէ՝ ոչ ոք ոտնակոխէ միւսին ազատութիւնը, եւ իւրաքանչիւրը ունենայ իր ազատ ժամերը:

ԼԱՒ ՕՐԻՆԱԿ ՇԱՐԱՅԵԼ
Ընկերարաններու կարծիքով, ծնողները պէտք է իրենց ընթացքով օրինակ ծառայեն իրենց գաւազներուն՝ ապագայ չափահասներուն:

Այսպէս, անոնք կարծիքով, ապագայ չափահասին վարուելակերպն ու ընթացքը Դ՛ն առ հարիւրով կախեալ է մանկութեան իր ծնողի տեսածին ու սորվածին:

Ծնողքի մը խիստ ու կայր ուսեցող ձեւը, խստիւր եղանակը, դժուարութիւններուն առջեւ հակադրուած ձեւը, ինչպէս նաեւ ընկերութեան մէջ կարգ ու կանոնի անոր գիտակցութիւնը եւ ուրիշներուն հետ յարաբերելու եղանակը խորապէս կը տպաւորեն երեխան:

Այս պատճառով այլ համերաշխ ընտանիքներէլ ելած գաւազներ կ'ունենան աւելի հաւասարակշռուած, ներդաշնակ եւ ուրախ կեանք մը, քան ուրիշները:

ARA TRAVEL IATA ԱՆՆԱՍ


ARMENIAN AIRLINES
SALES AGENT,
ՈՐԱՆՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԵ
ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՍՏՈՐԴՆԵՐՈՒՆ,
ՈՐ Կ'ԱՊԱՇՏՈՒՄ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԵՅՐՈՒԹ
ԵՒ ԸԱԼԵՊ - ԵՐԵՒԱՆ - ԸԱԼԵՊ
ARMENIAN AIRLINES ընկերութեան
• արանային օդուժ • ապրանքի փոխադրութիւն


ԱՐԱ ԹՐԱՎԸԼ,
Պուրճ Համուտ, Նամակատան շէք,
Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՃՈՆ ԿԱԼԻԱՆՈՅԻ ՎԵՐՋԻՆ ՅՂԱՑՈՒՄՆԵՐԸ



Տ ի ո Ր
Նորածե-
նութեան
տան ձե-
ւագէտ
Ճոն Կա-
լիանօ
վերջերս
Փարիզի
մէջ ցու-
ցադրեց
յառաջի-
կայ եղա-
նակի իր
վերջին յը-
ղացում-
ները, ո-
րոնք մե-
ծապէս
գնահատ-
ւեցան
ներկանե-
րուն կող-
մէ:




բ.- Ջարդեղէններ

Ճ ո Ն
Կալիանօ
բեմ հա-
նց ոչ միայն հոյակապ յղացում-
ներ, այլ նաեւ Զրիսթիան Տիոր Նո-
րածեութեան տան ոճին հաւատա-
րիմ *աքսեսուարներ*՝ կօշիկ, պայու-
սակ, գօտի եւ զարդեղէններ:

Յատուկ ուշադրութիւն գրաւեց
«*Հոթ ժուլյորի*» գոհարեղէններու
հաւաքածոն, որ Վիքթորիա տը Զաս-
թըլանի յղացումներէն էր, յատուկ
պատրաստուած՝ Տիոր Նորածեու-
թեան տան համար:

Կուտանք քանի մը խօսունք մտւել:



գ.- Կօշիկ եւ պայուսակ

ԴԵՂԱՐՈՅՍԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

«ՄՈՎ», ՎԱՅՐԻ
ԲԱՂՋՈՒԿ, ՍՈՒՈՇ
(ԽՐԴՊԵՅԶԷ)

Կը գործածուի ին բոյսի
ծաղիկն ու տերեւները:

Կը գտնուի նաեւ դեղա-
հատի ձեւին տակ:

Մովը կ'աճի Ասիոյ եւ
Եւրոպայի տարածքին: Ու-
նի գեղեցիկ բուխ մանի-
շակագոյն ծաղիկներ, ուր-

կը պատէ լորձնաթաղան-
թը բարակ շերտով եւ կը
պահպանէ զայն հետագայ
գրգռութիւններէ:


Իր բուսաճողքով ան
կ'ազդէ նաեւ հաստաղիք-
ներու պնդութեան, ցաւե-
րուն, բորբոքումից, լորձ-
նապատելով ստամոքսի եւ
աղիքներու թաղանթնե-
րը:

Եզրափակելով՝ ը-
տեմը, թէ մովն ու մովո-
շը թելագրելի են.-

- Հազը, խոպոտ ծալ-
նը, կոկորդի, խոչափո-
ղի եւ թոքերու բորբո-
քումները դարմանելու:
Ան փափկացնող եւ խու-
րաբեր է:

- Պնդութեան եւ աղի-
քային ցաւերը դարմա-
նելու:

- Վերջապէս, մորթա-
յին բորբոքումներ եւ
փստրիազիւր դարմանե-
լու համար:



Կէ նաեւ իր անուրը: Կը
գտնենք զայն գետերու եւ
առուներու ափերուն:

Կայ նաեւ մ'ուշի մօտ
բոյս մը, որ կիմուլ (*խըթ-
մի*) կը կոչուի. եւ որուն
տերեւներն ու արմատը կը
գործածուին:

Այս բոյսերուն ծաղիկ-
ները կը պարունակեն բու-
սահոյգիւր, որոնք ունին
բորբոքումի եւ նազի դեմ
ազդեցութիւն:

Մովը թելագրելի է
շնչափողի եւ թոքերու ան-
հագասութեանց պարա-
գային: Անոր բուսահոյգը



Այս բոյսին ծաղկած
գլխամասերն են, որ
կ'օգտագործուին:

Դաշտերու այս բոյսը
ունի մանր ներմակ ծա-
ղիկներ, որոնք կը պարու-
նակեն *տիթերփեճ* կոչուող
բոյսեր: Այս կենսաբոյսե-
րը կը նօսրացնեն խոչա-
փողի արտադրութիւնը եւ
կը դիւրացնեն անոնց ար-
տաքումը:

հանգարտեցնէ կոկորդի
բորբոքումները՝
Այս բոյսին գործածու-
թիւնը թելագրելի է.-
- Ազմի, շնչարգելու-
թեան պարագային:
- Հազի պարագային:
- Շնչափողերու բորբո-
քումի պարագային:

Պարտապէս
ԸՈՒՇԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ...

Շարունակում Ա. Էջևի

խորհրդակցելու համար խաղաղության գործընթացը վերախուսեցնելու միջոցներուն մասին: Մուսկովի րուսա, որ Գահիրեի վերադարձին հաշտության հանդիպում մը ունենայ իսրայելի վարչապետ Էսրա Դարաբի հետ:

Սուրիա սակայն չի բաժնոր Բլիսթրնի տեսակետը եւ կը պնդէ, որ խաղաղության բանակցութիւններուն վերսկսելու որոշումը կախեալ է Իսրայելի որդեգրելիք կեցողութենէ: Սուրիա կը պահանջէ, որ բանակցութեան սեղան վերադառնալէ առաջ, Իսրայելը խոստանայ, որ կոյանք ամբողջութեամբ պիտի վերադարձնէ: Սուրիոյ պաշտօնական լրատու գործակալութեան ընդհանուր տնօրէնը Ֆայէզ Սայէզ րուսա, որ ժրնեի վեհաժողովը խաղաղութեան վերջին առիթը եղած պիտի լլայն եթէ Իսրայելը շարունակէ յամառի իր կեցողութիւնը վրայ: Սայէզը աւելցուց, որ խաղաղութիւնը եւ գրաւում չեն կրնար միատեղ լլայն: Ան րուսա նաեւ, որ շրջանին մէջ կաշտութիւն պիտի չհաստատուի այնքան ատեն, որ Իսրայելը կը շարունակէ հողեր գրաւումը պահել եւ շրջանին վրայ իր հակակշիռը տարածելու փորձերը:

Սայէզը դիտել տուաւ, որ Ասատի ժրնե գտնուելը արդէն իսկ ցուցանիչ է, թէ Սուրիա որքան լուրջ է խաղաղութեան հաստատելու իր որոշումով: Սուրիա կ'ուզէ խաղաղութիւնը, սակայն պատրաստ չէ անոր գինը վճարելու կոյանք գիջելով, աւելցուց Սայէզը: Ան րուսա նաեւ, որ ամէն մարդ պիտի թէ Իսրայելը ինչպիսի խոչընդոտներ կը բարձրացնէ խաղաղութեան գործընթացին յաւանքալից իր մասը: Անոնք պիտեն նաեւ, թէ Սուրիա որքան լուրջ մտեցում որդեգրած է խաղաղութեան հանդէպ, րուսա Սայէզը:

ՌԱՄՈՆ ԳՆԻՒԱԿԸ ԿԸ ԳՏՆՈՒԹԻ ՍՈՒՐԻՅԻ ԿԱՇՏԸ

Իսրայելի պետական նախարար Հայիմ Ռամոն յայտարարեց, որ Իսրայելի ղեկավարները առանց ամօշտուր կրնան իրենց ծնողներուն եւ գինուորներուն աջքերուն նայել, որովհետեւ քայլ մը առաջ գացին Սուրիոյ հետ համաձայնութիւն կնքելու համար:

Ռամոն րուսա, որ գնդակը այժմ կը գտնուի Սուրիոյ դաշտը:

Միւս կողմէ, Սուրիոյ հետ բանակցող իսրայելացի գլխաւոր բանագնաց Ռուր Սակի րուսա, որ լաւագոյն պարագային իրողական վիճակը պիտի մնայ անփոփոխ: «Յոռեցուն պարագային, ակնատես պիտի լլայն գինուորական գործողութիւններու», աւելցուց ան:

Իր կարգին, Իսրայելի վարչապետ Էսրա Դարաբի գլխաւոր խորհրդական Տանի Եաթիմ յայտնեց, որ Իսրայելը միջոցը պիտի գտնէ պաշտպանելու համար Հարաւային Լիբանանի Բանակի անդամները, որոնք Լիբանանի կառավարութեան կողմէ դաւաճաններ կը նկատուին: «Եթէ անոնք պահանջեն, անոնք պիտի օգնենք» րնակութեան վայր հայտնեց իսրայելի մէջը, րուսա ան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՂՏԱՏ ՄԱԿԵՆ ԿԸ ՊԱՇԱՆՋԷ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԱՐԵՄՏԵԱՆ ՈՍԲԱԿՈԾՈՒՄՆԵՐԸ

ՊԱՂՏԱՏ, 29 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրաք ՄԱԿԵՆ պահանջած է դատաւարտել արեւմտեան ուժերուն օդանաւային ուժերուն նմանազանը «արգիլելու գոտի»ներուն մէջ գտնուող թիրախներու վրայ, հաղորդեց իրաքեան մամուլը Չորեքշաբթի օր:

Օրաթերթերը յայտնեցին, որ արտաքին գործոց նախարար Մոհամետ Սալիտ Սահաֆ նամակ մը ուղարկած է ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի՝ պահանջելով, որ միջազգային կազմակերպութիւնը դատաւարտէ ուժերուն մը եւ վայրն ուղի իր տեղեկա-

գիրներուն մէջ: Օրաթերթերը պահանջեցին նաեւ, որ Իրաք - Քուէյթ սահմանագծին վրայ հսկող ՄԱԿի ուժերը արձանագրեն այս իրախտումները եւ վաւոր փոխանցեն Անանի: Օրաթերթերը աւելցուցին, որ արտաքին գործոց նախարարութիւնը քահ մը օր առաջ հանդիպումի մը իրաւիրած է ՄԱԿի հըսկող ուժերու հրամանատարը, որմէ պահանջած է, որ այդ ուժերը դերակատարութիւն ընեն ան սահմանին

վրայ կայունութիւն եւ ապահովութիւն հաստատելու համար:

Միւս կողմէ, Չորեքշաբթի օր Իրաքէն հեռացաւ ՄԱԿի մարդասիրական գործունէութիւնը համակարգող գլխաւոր պաշտօնատար Հանս Վոն Սիորնէք, որ իր պաշտօնէն հրաժարեցաւ, որովհետեւ ՄԱԿի «քարիւղի փոխարէն անդեղէն» ծրագիրը ձախողած է եւ չէ կրցած մեղմացնել իրաքի ժողովուրդին տառապանքը:

ՂՈՒԿԱՍՏԵԱՆԻ ԴԵՍ ՄԱՅԱՓՈՐԶ...

Շարունակում Ա. Էջևի

Ղուկասեան սակայն տեղեկացուց, որ կալանաւորւած կը մնայ ԼՂՀի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբայեան, որ մեղադրուած է ալօքրիլի գէղեղ պահելու եւ պաշտօնական դիրքը չարաշահելու յանցանքներով: Իստախաղը չբացառեց, որ կը ընդհատ փոխուի Ս. Բաբայեանին առաջադրուած մեղադրանքները:

«Հայոց Աշխարհ»-ին հասած տեղեկութիւններու համաձայն, Արցախի մէջ ձերբակալուածներու թիւը կը հասնի 200ի, որոնց կարգին է ԼՂՀի «Երկրապահ» Միութեան նախագահ Արկաղի Կարապետեան:

Այլ տեղեկութիւններու համաձայն, ձերբակալուած են նաեւ Ստեփանակերտի նախկին քաղաքապետ Կարէն Բաբայեանի օգնական, Հայաստանի քաղաքացի Գարեգին Ղազարեան, ինչպէս նաեւ «10րդ Նահանգ» թերթի լրագրող Վահրամ Աղաջանեան: Մինչեւ անաբեկչութեան օրը թերթին գլխաւոր իմբպգիր Գեղամ Պաղտասարեան, փոխ իմբպգիր Ռուզան Իշխանեան եւ Վ. Աղաջանեան զանազան առիթներով կանչուած են ԼՂՀի դատախազութիւն:

●ԼՂՀի նախագահ Արկաղի Ղուկասեանին այցելեցին Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Անատոլի Տրիւքով, ԼՂՀի Ազգային Ժողովի նախագահ Սլէկ Եսայեան, եւ այլ անձնաւորութիւններ:

Ղուկասեանը ինամող բժիշկներու համաձայն, նախագահին եւ թիկնապահներուն աղաքիւնումը կ'ընթացայ առանց բարդութիւններու:

ԽԱՂՔԱՄ ԹԻԲ 4527

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՅ


- Շքեղօրէն գարդար-ւիր սիրող - Ջերմուկներ գտնող իշապանը:
- Խոփար արօրին միացր-նող փայտ - Մեքենայի կլոր ձող:
- Հետք - Արրուքի հա-սած մանչ:
- Առաջնակարգ, գե-րողասելի:
- Իրերայջողող տառեր - Այրուբենէն - Անգոր:
- Մեր առաջին թարգ-մանիչներէն:
- Պահեստ - Իրերայ-ջողող գիրեր - Յուցական ածական:
- Կարգ - Միսիսիփի գե-տնուող նաւահանգիստ մը:
- Մարձէ՛ - Յատակէ՛:
- Արկաղեան սոխակ - Թուրք - Այրուբենէն:
- Այնը - Ուղտափուշ (հակ.):
- Ափրիկեան երկիր - Լ. Ո. Խաչի մասնաճիւղերէն:
- Կլօսորուան կերա-կուր - Արական անուն:
- Խաչ - Իգական ա-նուն:
- Պատկառանք, մեծա-րանք - Չայնակից տառեր:
- Յուցական ածական - Ոգեւորութիւն - Լեզուով մը՝ այն՝:
- Նափոյէն Սի աքսո-րալայրերէն - Յրանսա-կան գետ:
- Չեւքի փոփոք երեսին գարնել:
- Հնարիչ - Թովու-թիւն, կախարողանք:
- Անգարայի հիւսիսը գտնուող յեննաշղթայ - Տհաս ցորեն:
- Փուճ - Պղտոր գետի թանձր մրուր:
- Կառքի շրջանակ - Այրարատ նահանգի գա-ւառներէն:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	4	U	Պ	Ո	Ց	Ս	Ա	Ղ	Ի	Կ	
2	Ա	Ի	Ս	Ս	Ե	Կ	Ր	Ս	Ր	Ա	
3	Պ	Ա	Ր	Ա	Ս	Ե	Ս	Ա	Ս		
4	Ի	Ր	Կ	Ո	Ր	Ո	Ս	Ց	Ս		
5	Ց	Ա	Կ	Ս	Ա	Ր	Ա	Ս	Ա		
6	Ց	Օ	Ց	Կ	Ո	Ր	Ա	Ս	Ա		
7	Ե	Ր	Կ	Ա	Ս	Ր	Ա	Ս	Ա		
8	Ղ	Ա	Ր	Ա	Ս	Ր	Ա	Ս	Ա		
9	Ե	Լ	Ր	Ա	Ս	Ր	Ա	Ս	Ա		
10	Ա	Ց	Ս	Ա	Ր	Ա	Ս	Ա	Ս		
11	Ս	Ա	Ր	Ա	Ս	Ր	Ա	Ս	Ա		

ԹԻԲ 4526


ԽԱՂՔԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ



400 g

1.960 L.L.



340 g

910 L.L.



340 g

1.131 L.L.



500 g

1.455 L.L.

200 ԿՐԱՍ ՄՈՑԱՐԵԼԼԱ ՊԱՆԻՐ

1.400 L.L.

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ MASTER MALL



ԳՆՈՒՄԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՇԱՍՅԵՆ

200 ԿՐԱՍ ԶԻԹԱՊՏՈՒՂՈԿ ՄՈՐԹԱՏԵԼ

770 L.L.



454 g

1.000 L.L.



200 ԿՐԱՍ ՊՈՒԿԱՐԱԿԱՆ ՊԱՆԻՐ

2.490 L.L.



200 ԿՐԱՍ ՊՈՒԿԱՐԱԿԱՆ ՊԱՆԻՐ

1.050 L.L.



200 ԿՐԱՍ ՊՈՒԿԱՐԱԿԱՆ ՊԱՆԻՐ

1.590 L.L.



6.095 L.L.